ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«13» հոկտեմբեր 2012 թ. N 48

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 13-ի N82-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղական համայնքում համայնքի նոր ղեկավարի ընտրության կապակցությամբ գյուղապետարանում ընդունման-հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ա. Ղուկասյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հնգօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (պաշտոնակատար Հ. Հարությունյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2012 թվականի հուլիսի 13-ի
N 88 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ղուկասյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ.

Անդամներ՝

Յու. Մանվելյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի պետ.

Հ. Ալեքսանյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ.

Ս. Խաչատրյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ.

Ա. Պողոսյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

Հանձնող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մաթևոսյան.

Ընդունող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղական համայնքի նոր ղեկավար՝ Ա. Գրիգորյան:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***